

Մի քանի դիտարկումներ ածականի խոսքիմասային փոխանցումների մասին

Ածականը՝ իբրև խոսքի մաս, շատ վաղուց է արժանացել հայ քերականների ուշադրությանը՝ տարբեր կերպ ներկայացվելով հին և նոր քերականական աշխատություններում:

Դիոնիսիոս Թրակացու և նրա քերականության մեկնություններում ածականը չի ընդունվում որպես առանձին խոսքի մաս. այն ընդգրկվում է անուն խոսքի մասերի մեջ՝ գոյականի և թվականի հետ միասին:

Նշենք, որ ածականը խոսքի մասերի համակարգում առանձնացվում է որպես հատկանիշ արտահայտող բառերի կարգ, որոնց մի մասը դրսևորում է այդ հատկանիշը ոչ թե անմիջականորեն, այլ ուրիշ առարկաների հետ հարաբերության մեջ դրվելով:

Ինչն է հիմք դարձել քերականների համար, որ նույն անվան տակ են քննել ածական, թվական և գոյական խոսքի մասերը:

Իբրև հատկանիշ արտահայտող խոսքի մաս՝ ածականը, բնականաբար, շատ սերտ առնչություններ ունի թվականի հետ: Երկուսն էլ ցույց են տալիս հատկանիշ, բայց պետք է վեր հանել այն յուրահատկությունը, որը կտարբերի այս երկու խոսքի մասերը:

Ս. Աբրահամյանը ածականի համար որպես բնորոշ գիծ նշում է նրա՝ առարկայի համար ունեցած բնութագրող արժեքը. «Յուրաքանչյուր ածական, դրվելով գոյականի վրա, արտահայտում է նրա ցույց տված առարկայի որևէ հատկությունը (ներքին, արտաքին): *Գեղեցիկ* տեսարան, *համեստ* մարդ, *ընդարձակ* սրահ կապակցություններում ընդգծված ածականներով ըստ էության բնորոշվում է համապատասխան առարկան այս կամ այն հատկանիշով: Մինչդեռ առարկայի անվան վրա թվական դնելով՝ մենք չենք բնորոշում այդ առարկան ո՛չ բովանդակության, ո՛չ ձևի տեսակետից»¹:

Այսպիսով, ածականները առարկան բնութագրող բառեր են: Նրանք ցույց են տալիս առարկայի ներքին կամ արտաքին էությունը բնութագրող հատկանիշ, որպիսություն, իսկ թվականը՝ թվային, որը բնութագրող չէ:

Այսօր արևմտահայ որոշ քերականներ էլ որոշակի վերապահությամբ են ընդունում թվականը որպես առանձին խոսքի մաս՝ այն միացնելով ածականին: Պատճառը դարձյալ երկու խոսքի մասերի իմաստային ընդհանրությունն է և թվականի քերականական կարգերի սակավությունը:

Մանուկ Աբեղյանը նույնպես թվականը համարում է ածականի ենթատեսակ: Նախ՝ նրա տված դասակարգումները բոլորովին այլ են: Աբեղյանը ածական է համարում բոլոր այն բառերը, որոնք ցույց են տալիս հատկանիշ, և այդ սկզբունքով

¹ Աբրահամյան Ս., *Ճամանակակից հայերենի քերականություն*, Եր., 1969, էջ 80:

միավորում թվականները, հարակատար և ենթակայական դերբայները, որոշ դերանուններ:

Ըստ Մ. Աբեղյանի՝ ածականները լինում են՝

1. Անուն ածական կամ ածական անուն (լավ, վատ, սև),
2. Թվական անուն կամ ածական թվական (մի, երկու, երեք, առաջին, երկրորդ, երրորդ),
3. Դերբայ ածական կամ ածական դերբայ կամ բայածական (գրած, գրելու, գրող),
4. Դերանուն ածական կամ ածական դերանուն (այս, այդ, այն)²:

Աբեղյանը ածական է համարել առհասարակ հատկանիշ ցույց տվող բառերը՝ նշելով, որ «Ածականները նշանակում են ոչ-ինքնակա հատկանիշներ, որ մտածվում են իբրև առարկաներից անբաժան, նրանց մեջ գտնված մի հատկություն, գործողություն, դրություն և այլն, կամ իբրև առարկայի հատկանիշի հատկանիշ, ինչպես՝ բարի (մարդ), ծաղկած (ծառ), սաստիկ պինդ (քամի). այդ պատճառով և այդ բառերը խոսքի մեջ իբրև վերադիր դրվում են գոյականի կամ ուրիշ հատկանիշ ցույց տվող բառի վրա և կոչվում են «ածական», այսինքն՝ «վերադրական» («ածել» բառից, որ հին լեզվի մեջ նշանակում է նաև «վրան առնել», «վրան դնել»)³:

Հետագայում Մ.Աբեղյանը փորձում է ավելի պարզ դասակարգում կատարել:

Ավելի շատ ածական խոսքի մասը նույնանում է գոյական անվան հետ: Իսկ ի՞նչն է հիմք ծառայում այս երկու խոսքի մասերի նույնացմանը:

Ընդհանրապես խոսքի մասերի սահմանները միանշանակ չեն ու նաև փակ չեն: Կան բառեր, որ միաժամանակ մի քանի խոսքիմասային արժեք կարող են ունենալ, օրինակ՝ լինել և՛ գոյական, և՛ ածական: Բացի այդ, բազմաթիվ գոյականներ կարող են կիրառվել ածականի նշանակությամբ: Նման դեպքերում նրանք մեծ մասամբ ուղիղ ձևով են կիրառվում խոսքում և անպայման որևէ գոյականի լրացում են լինում, ինչպես օրինակ՝ «Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել» (Հ.Թ.), «Առավոտյան ծով ճաճանչում Արտույտն ուրախ ճախրում է վեր» (Ա.Ի.), «Հրաշք աղջիկ, գիշերների թագուհի...» (Վ.Տ.) և այլն:

Խոսքիմասային այս փոխանցումները, երբ առանց որևէ փոփոխության բառը կամ բառաձևը կարող է կրել խոսքիմասային արժեքի փոփոխություն, վերածվել այլ խոսքի մասի, ընդունելի է և սահմանված է հայ լեզվագիտության մեջ: Խոսքիմասային փոխանցումը կարող է կապված լինել մի շարք իրողությունների հետ՝ բառիմաստի, բառակազմության, շարահյուսական կիրառությունների, ձևաբանական առանձնահատկությունների, խոսքիմասային իմաստի:

Մ.Ասատրյանը խոսքիմասային կարգերը որոշելիս բառերի ընդհանուր իմաստի և ձևավորման ու ձևաբանական առանձնահատկությունների հետ միաժամանակ կարևորում է նաև բառերի շարահյուսական կիրառությունները. «Միայն այսպիսի բազմակողմանի մոտեցման դեպքում կարելի է ճշտորեն որոշել տվյալ լեզվում իրոք գոյություն ունեցող խոսքի մասերը՝ մի կողմից և կոնկրետ բառերի խոսքիմասային պատկանելությունը մյուս կողմից»⁴:

Ա. Մարգարյանը, անդրադառնալով որպես ածական գործածվող գոյականներին, գրում է. «Նման դեպքերում գոյականը զրկվում է հոլովական իմաստից և կամ ամեննին էլ հոլովական հարաբերությամբ չի կապակցվում լրացյալ գոյականի հետ,

² Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Եր., 1965, էջ 130:

³ Աբեղյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 28:

⁴ Ասատրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզու*, Եր., 1983, էջ 34:

ուստի և սխալ ու մերժելի պետք է համարել մինչև այժմ ընդունված ու տարածում գտած այն տեսակետը, թե իբր որոշիչը նաև գոյականի ուղղական հոլովով է արտահայտվում»⁵:

Ածականաբար գործածվող գոյականների մեջ կան այնպիսիները (օր.՝ քար, ծով, ոսկի և այլն), որոնց մեջ մթագնել է առարկայական իմաստը և ավելի մոտեցել են բուն ածականներին: Երբեմն հնարավոր է, որ բառն այնքան հեռանա իր նախնական իմաստից, որ ստեղծի համանունային գույգ, ինչպես՝ *սուր* բառը, որ նախապես գոյականական իմաստ է ունեցել, ժամանակի ընթացքում ստացել է ածականի իմաստ՝ «լավ կտրող, հատու»:

Առավել տարածված է հակառակ խոսքիմասային փոխանցումը, երբ ածականն է հանդես գալիս գոյականաբար:

Խոսելով գոյականի և ածականի միջև եղած աղերսների մասին՝ Մ.Ասատրյանը բերում է այն հիմնական տարբերությունը, որը տարանջատում է այս երկու խոսքի մասերը. ածականի արտահայտած հատկանիշը ոչ ինքնակա հատկանիշ է, որ առարկայից անկախ և ինքնուրույն մտածվել չի կարող, իսկ գոյականն արտահայտում է ինքնակա հատկանիշ, առարկայացված հատկանիշ, ինչպես՝ սպիտակ (ձյուն) – սպիտակություն, գեղեցիկ (աղջիկ, անտառ) – գեղեցկություն և այլն⁶:

Բառերի արտահայտած մասնավոր իմաստներից բխում է նրանց ընդհանուր խոսքիմասային իմաստը, որով պայմանավորված են նրանց ձևաբանական հատկանիշները և շարահյուսական կիրառությունները: Ինչպես վերը նշեցինք, խոսքի մասերի սահմանները միանշանակ ու փակ չեն. ժամանակի ընթացքում միևնույն խոսքի մասի համակարգում կարող են կատարվել զանազան փոփոխություններ, մասնավորապես՝ բովանդակային պլանում, ինչը կարող է հանգեցնել նաև խոսքիմասային ընդհանուր իմաստի, ձևաբանական առանձնահատկությունների, շարահյուսական կիրառությունների փոփոխությունների:

Միանգամայն դժվար է պատասխանել այն հարցին, թե նման բառերի մեջ ո՞ր իմաստն է գերիշխող՝ հատկանշայի՞ն, թե՞ առարկայական:

Գրաբարից ժառանգած մեծ թվով բառեր, որոնք գրաբարում ունեցել են միայն ածականի արժեք, այժմ դրսևորում են ածական//գոյական երկարժեքություն:

Հ. Հարությունյանը տարբերակում է ածականային փոխանցման երկու տեսակ՝

1. Արտաձականային, երբ ածականը փոխում է իր խոսքիմասային պատկանելությունը, կամ ուրիշ խոսքի մաս վերածվում է ածականի,
2. Ներաձականային, երբ ածականը մնում է ածական, փոխում է միայն տեսակը՝ հարաբերականը դառնում է որակական⁷:

Այսպես, *անառակ* բառը մասնակի ոչ գծային բառաստեղծմամբ ցուցաբերում է ածական//գոյական երկարժեքություն:

Մասնակի ոչ գծային բառաստեղծմամբ գոյականացման հիմքը բառի փոխանվանական կիրառությունն է: Այս իմաստով բառը գործածվել է սահմանափակ թվով անձի իմաստ արտահայտող *մարդ*, *տղամարդ*, *կին*, *որդի*, և անձի հետ առնչվող *կյանք*, *վերաբերմունք*, *սպրեղակերպ* և այլ բառերի հետ, և այս գործառական դաշտի նեղացումը պատճառ է դարձել առարկայական իմաստի ձևավորմանը⁸:

⁵ Մարգարյան Ա., *Հայոց լեզվի քերականություն*, Եր., 2004, էջ 199:

⁶ Ասատրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, Բ, Եր., 1973, էջ 6:

⁷ Հարությունյան Հ., *Ածական անուն: Դերանուն*, Եր., 1976, էջ 40:

⁸ Հայրապետյան Ա., *Ոչ գծային բառաստեղծումը հայերենում*, Եր., 2011, էջ 38:

Կենդանի բառը գրաբարում ածական էր՝ «ողորմելի, եղկելի, դժվարին կամ դժբախտ վիճակում գտնվող» իմաստներով, իսկ արդի հայերենում ածականական իմաստը այլ երանգավորումներ է ձեռք բերել, բայց «անձի» նախնական իմաստով, այժմ ձեռք է բերել նաև գոյականի արժեք:

Լիրբ բառը նույնպես գրաբարում ածականի արժեք է ունեցել՝ «անամոթ, անպատկառ, լպիրշ» իմաստներով: Ժամանակակից հայերենում *լիրբ գազան* կառույցում միայն կարող է դիտվել որպես ածական, բայց *լիրբ* բառի առանձին գործածությունից հասկանում ենք, որ խոսքը վերաբերում է մարդուն, այսինքն՝ այն ունի «անբարոյական, բարոյապես փչացած, անամոթ, աղմկարար (անձ)» իմաստը:

Հայերենի զարգացման արդի փուլում ածական//գոյական խոսքիմասային երկարժեքություն են դրսևորում նաև *սպիրատ, հտպիտ, սպստամբ, հիվանդ* և մի շարք այլ բառեր:

Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում⁹ կարելի է հանդիպել բազմաթիվ բառերի, որոնք դրսևորում են գոյական//ածական երկարժեքություն, ինչպես՝

Գլխապտույտ - գոյ. 1.գլխի պտույտ, ած. 2.գլխապտույտ առաջացնող, շշմեցուցիչ, ապշեցուցիչ:

Երիտասարդ - գոյ. 1.չափահասության հասակից մինչև շուրջ 40 տարեկան հասակը, ած. 2.ոչ տարիքոտ, մեծ հասակի չհասած, ջահել, առույգ, կայտառ:

Նախշածն - գոյ. 1.նախշի ձև՝ ոճ, իբրև նախշ ծառայող ձև, գծագրական՝ երկրաչափական ևն ձև, որ քանդակված կամ պատկերված է իբրև նախշ, ած. 2.նախշի ձև ունեցող, նախշի նման, նախշի տպավորություն թողնող:

Նախշանկար - գոյ. 1.իբրև նախշ արված նկար, ած. 2.նախշերով նկարված՝ զարդարված:

Ոսկեշրթա - գոյ. 1.ոսկյա շրթա, ոսկեղեն շրթա, ած. 2.ոսկեցով շրթա կազմող, ոսկեգույն լույսերի շրթա ձևացնող:

Չարահոգի - ած. 1.չար հոգի ունեցող, չարասիրտ, դաժան, անագորույն, գոյ. 2.չարամտությամբ՝ չարասրտությամբ արված՝ տեղի ունեցած:

Գանգուր - ած. 1.ոլորուն, օղակաձև ոլորքներ կազմող, խուճուճ, գռուգ, գանգրահեր, գոյ. 2.առավել. հոգն.՝ ոլորքներ կազմող մազեր:

Սազամաշկ - գոյ. 1.սազի մաշկ, մորթ, (բժշկ.)՝ ցրտից կամ նյարդային գրգռումից կարմրած ու դուրս տված մաշկ՝ մորթ (մարդու), ած. 2.այդպիսի մաշկ ունեցող:

Կան մի խումբ բառեր, որոնց մեջ փոխաբերական իմաստի առաջացման արդյունքում տեղի է ունեցել բառի խոսքիմասային արժեքի երկփեղկում, ինչպես՝ *աբեղացու* բառը, որը իր նախնական գոյականական իմաստով նշանակել է «աբեղա դառնալու պատրաստվող մարդ», փոխաբերական իմաստով ձեռք է բերել ածականի արժեք՝ «վախկոտ մարդ», *մարմար* բառը նշանակում է «զանազան գույների բյուրեղային լեռնապար, որ օգտագործվում է մեծ մասամբ քանդակագործության և ճարտարապետական աշխատանքների համար», իսկ փոխաբերական իմաստով ստացել ածականական, այն է՝ «ողորկ, սպիտակ ու փայլուն» իմաստը, *գաճաճ* բառը, որ նշանակում է «սովորականից շատ կարճ հասակով մարդ, թզուկ, իսկ փոխաբերական իմաստով՝ «աննշան, փոքրիկ, չնչին» և այլն:

⁹ Աղայան Է., *Արդի հայերենի բացատրական բառարան*, Եր., 1976:

Ունենք նաև բառերի մի խումբ, որոնք գոյականի արժեք ունեցող գիտական տերմիններ են և միաժամանակ ածականներ, օրինակ՝ *բազմանդամ* բառը որպես ածական՝ «շատ անդամներ ունեցող, շատ անդամներից բաղկացած», իսկ որպես գոյական՝ մաթեմատիկական տերմին՝ «մի քանի միանդամների հանրահաշվական գումարը ներկայացնող արտահայտություն», *բազմանկյուն՝ ած.-(երկրչ.)՝ չորսից ավելի անկյուն ունեցող, գոյ.-(երկրչ.)՝ փակ բեկյալ գծով կազմված երկրաչափական պատկեր*, այսպես նաև՝ *բազմանկյուն, բազմապատկելի, բազմանիստ, բազմաստղ* և այլ բառեր:

Առավել մեծ թիվ են կազմում բաղադրյալ բառերը: Այսպես, -ական ածանցով գրաբարյան միարժեք մի շարք կազմություններ արդի հայերենում դրսևորում են խոսքիմասային երկարժեքություն:

Կրոնական բառը գրաբարի բառարանում ներկայացված է որպես ածական: Ժամանակակից հայերենում այս բառը ածական է -ական ածանցի ընդհանուր բառակազմական նշանակությամբ՝ կրոնական հայացք, կրոնական արարողություն, բայց ածական-գոյական կայուն կապակցության կրճատման հիմքով՝ կրոնական մարդ>կրոնական, նաև գոյական է:

Դպրոցական բառը գրաբարում ածական էր՝ «դպրոցում սովորող, ուսանող» իմաստով, իսկ այսօր այն նույն սկզբունքով (ածական կայուն կապակցության կրճատման հիմքով) ձեռք է բերել նաև առարկայական իմաստ:

Հետաքրքիր իմաստային զարգացում է ունեցել *վեհափառ* բառը: Գրաբարում այն գործածվել է միայն ածականական իմաստով՝ «վեհագույն փառքով, գերափառ, գերապատիվ, գերագույն»: Հաճախ այս բառը գործածվել է որպես միապետների և հայոց կաթողիկոսների մակդիր: Հետագա դարերում հայ միապետները դուրս եկան պատմական ասպարեզից, և այն սկսեց գործածվել միայն կրոնական առաջնորդների անվան հետ, ու ստեղծվեց կայուն ածական-գոյական կապակցություն՝ *վեհափառ կաթողիկոս*: Հետագայում կատարվեց գոյական որոշյալի կրճատում, և ածական որոշիչը ընդունեց նաև գոյական որոշյալի բառային իմաստը: Այժմ հայ առաքելական եկեղեցու առաջնորդին դիմում են ավելի շատ վեհափառ, քան կաթողիկոս բառով:

Ածական//գոյական մասնակի ոչ գծային բառաստեղծման հիմք են դառնում նաև արտալեզվական երևույթները, օր.՝ *հրազեն* բառը գրաբարում ուներ «հրով սպառազեն» ածականական իմաստը: Երբ ստեղծվեց հրազենը՝ կրակի ուժով գնդակ կամ ռումբ արձակող զենքը, մեր լեզուն կարիք չուներ նոր բառ փոխառելու: Գրաբարում կար *հրազեն* ածականը, որը իմաստային դաշտով համընկնում էր արդի հայերենի հրազեն գոյականի հետ: Պարզապես փոփոխության ենթարկվեց բառի ներքին ձևը:

Ածական//գոյական մասնակի ոչ գծային բառաստեղծումը հայերենում սովորական երևույթ է: Որոշ լեզավաբաններ վերջինիս առաջացման առաջնային հիմքը համարում են բառերի փոխանվանական կիրառությունը:

Այսպես, Հ. Հարությունյանը գրում է. «Փոխանունությունը բնորոշ է լեզվական բոլոր միավորներին՝ սկսած հնչյունից, վերջացրած նախադասությամբ, իհարկե, տարբեր չափերով՝ արտահայտելով տարբեր իմաստներ, ունենալով տարբեր դեր ու արժեք»¹⁰:

¹⁰ Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 36:

Ածականներին (ինչպես նաև գոյականի վրա դրվող այլ բառերի) նա բնորոշ է համարում իմաստային փոխանունությունը, իսկ այն գոյականը, որի իմաստը արտահայտում է փոխանվանաբար առնված ածականը, խոսքային միջավայրում նախապես հայտնի պետք է լինի, բացի այդ, ածականի փոխանվանական գործածությունը Հ. Հարությունյանը ոճական է համարում, որը միտված է խոսքն ավելի սեղմ դարձնելու:

Ս.Աբրահամյանը այս հարցի վերաբերյալ անում է իր դիտարկումները. «Բառերի գոյականաբար կամ փոխանվանաբար գործածությունը դրսևորվում է հետևյալ կերպ: Այդ բառերի համար բնորոշ է առարկայի անվան վրա դրվելը և դրանով իսկ որոշյի դեր կատարելը. սակայն դրանք կարող են իրենց մեջ ներառնել գոյական որոշյալի ընդհանուր առարկայական իմաստը, դրանով իսկ իրենց արտահայտած հատկանիշի իմաստին ավելացնել գոյականական տարր: Եվ որովհետև առարկայի իմաստը ամենաընդհանուր ձևով է մտնում հատկանիշի իմաստ ունեցող այդ բառերի մեջ, այդ պատճառով էլ փոխանունը, որպես բառ, չի փոխում իր խոսքիմասային պատկանելությունը, չի դառնում գոյական, այլ նախադասության մեջ կատարում է գոյականի դեր»¹¹:

Վերջինս փոխանունության այս տեսակն անվանում է իմաստային-ֆունկցիոնալ՝ նկատի ունենալով, որ փոխանունների այս տիպին բնորոշ է թե՛ առարկայական որոշ իմաստի առկայությունը, թե՛ բառի ֆունկցիոնալ փոփոխությունը:

Լեզվաբանն առանձնացնում է նաև փոխանունության մեկ այլ տեսակ՝ այն կոչելով անվանողական-ֆունկցիոնալ: Սա այն տեսակն է, երբ մենք նկատի չունենք բառի իմաստը. բառն այս պարագայում վերցնում ենք որպես լեզվական միավոր, լեզվական արտահայտություն: Նա բերում է հետևյալ օրինակները. «Սակայն-ը շաղկապ է», «Գարուն-ը երկվանկ բառ է», «Հաճելի-ն ածական է»:

Ածականական արժեքի երկփեղկումով առաջացած տարարժեք բառերը ձևավորվել են ածականի փոխանուն կիրառության ճանապարհով: Բայց նշենք, որ փոխանվանական գործածության հետևանքով ածականները միշտ չեն վերածվում գոյականների. ուղղակի դա այն ուղին է, որով անցնում է ածական//գոյական արժեքներ համատեղող բառերի մեծ մասը: Եվ սա միակ ուղին չէ, որով առաջացել են երկարժեք բառերը տարածամանակյա հայեցակետով:

Ածականը յուրատեսակ խոսքի մաս է և աղերսներ ունի ոչ միայն գոյականի և թվականի, այլև այլ խոսքի մասերի՝ մակբայի, դերանվան որոշ ձևերի և նույնիսկ՝ կապերի հետ:

Հայերենի որակական ածականների մի մասը գործածվում է ոչ միայն գոյականների հետ՝ ցույց տալով առարկայի հատկանիշ, այլև գործածվում է բայերի հետ՝ ցույց տալով գործողության հատկանիշ և հանդես գալով ձևի պարագայի պաշտոնով: Որպես պարագա կիրառվող այսպիսի բառերը ածակա՞ն են, թե՞ մակբայ: Այստեղ լեզվաբանների կարծիքները բաժանվում են երկու մասի: Ոմանք նման կիրառություններում ածականի գործածությունը չեն ընդունում. այդ դեպքում, երբ ածականը լրացնում է բային, չի ընկալվում որպես ածական, այլ դառնում է մակբայ:

Այս տեսակետի կողմնակիցներից մեկը՝ Ս.Աբեղյանը, ընդհանրապես ածական և մակբայ խոսքի մասերը ընդունում է մեկ ընդհանուր տեսակի՝ մակադրական

¹¹ Աբրահամյան Ս., *Ժամանակակից հայերենի քերականություն*, Եր., 1969, էջ 93:

(վերադրական) բառերի մեջ, որոնք ցույց են տալիս հատկանիշ: Դրանց էական տարբերությունն այն է, որ ածականը արտահայտում է առարկայի հատկանիշ, իսկ մակբայը՝ հատկանիշի հատկանիշ: Ապա հավելում է. «Մեր մակբայներն ամենամեծ մասամբ դրությամբ միայն մակբայ են: Երբ ածականների ցույց տված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկային, այլ առարկայի հատկանիշին, այն ժամանակ ածականներն առնվում են իբրև մակբայ, կամ թե երբ ածականը խոսքի մեջ դրվում է ոչ թե մի գոյական անվան վրա, այլ մի ածականի ու բայի վրա, այն ժամանակ ածականը կիրառվում է իբրև մակբայ: Հայերենում մակբայն, ուրեմն, ածականի առանձին կիրառությունն է շարահյուսական կապակցության մեջ»¹²:

Մ.Ասատրյանը խոսքի մասերը հստակ քննում է ինչպես ձևաբանական, այնպես էլ շարահյուսական մակարդակում, ինչն էլ հիմք է տալիս լեզվաբանին շարահյուսական մակարդակում տարբերակել ածականը և մակբայը. «Լեզվական փաստերն ակնհայտորեն ցույց են տալիս, որ հայերենում ածականն ու մակբայը ձևականորեն տարբերակված չեն և պետք է որոշվեն ըստ շարահյուսական կիրառության»¹³:

Մ.Ասատրյանը փոխանվանաբար հանդես եկող ձևերը բուն ածականներ չի համարում՝ առաջնային համարելով դրանց շարահյուսական կիրառությունը:

Հակառակ մոտեցման կողմնակիցները կարծում են, որ ածականը, դրվելով բայի վրա, մինևույն է՝ մնում է ածական և չի դառնում մակբայ. այս դեպքում ածականը պարզապես հանդես է գալիս մակբայաբար: Այս տեսակետի կողմնակիցներն ավելի շատ են (Գ.Զահուկյան, Գ.Սևակ, Ս.Աբրահամյան, Վ.Առաքելյան, Հ.Օհանյան, Ալ. Մարգարյան և այլք):

Պետք է նշել, որ այսպիսի՝ երկխոսքիմասային նշանակությամբ գործածվում են որակական ածականները և այն էլ՝ ոչ բոլորը:

Այսպիսով, ինչպես տեսանք, ածական խոսքի մասի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ եթե այս խոսքի մասին պատկանող բառերի մեծ մասը ունի զուտ ածականական, ապա մի մասն էլ այլ խոսքի մասի նշանակությամբ է հանդես գալիս: Այս դեպքում մենք դարձյալ գործ ունենք երկխոսքիմասային կամ եռախոսքիմասային իրողության հետ:

Ակադ. Գ.Զահուկյանը նմանատիպ բառերը քննելիս դասակարգում է դրանք՝ ըստ եռակի (գոյական-ածական-մակբայ) և երկակի (գոյական-ածական, ածական-մակբայ) արժեք ունեցող բառերի¹⁴:

Լեզվաբանների մեծ մասը այս երևույթը կապում է բառերի շարահյուսական կիրառությունների հետ:

Ա. Մարգարյանը այս երևույթը կապում է շատ ու շատ բառերի ոչ թե շարահյուսական կիրառությունների, այլ նրանց ընդհանուր-վերացական բառային-բառութային իմաստների հետ, բայց հավելում. «Այստեղից, սակայն, չպետք է հետևեցնել, թե բառերի խոսքամասային իմաստները և նրանց շարահյուսական կիրառությունները տարազատված, անջատված են իրարից. ամենևի՛ն»¹⁵:

Այն, որ ածականը կարող է գործածվել անփոփոխ մակբայական պաշտոնով, թեև սրանց հիմնական կիրառությունը ածականական է, այսպիսի համանունությունը

¹² Աբեղյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 129:

¹³ Ասատրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզու*, Եր., 1983, էջ 138:

¹⁴ Զահուկյան Գ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Եր., 1974, էջ 526:

¹⁵ Մարգարյան Ա., *Հայոց լեզվի քերականություն*, Եր., 2004, էջ 188:

գործառական է: Բայց կա հատկանիշ ցույց տվող բառերի մի խումբ, որ միաժամանակ ցույց է տալիս և՛ առարկայի, և՛ գործողության ու հատկանիշի հատկանիշ: Նման բառերը դասվում են և՛ ածականների, և՛ մակբայների մեջ:

Այս երկարժեքության հիմնական պատճառն այն է, որ երկու խոսքի մասերն էլ ունեն իմաստային ընդհանրություններ, թե՛ ածականը, թե՛ մակբայը արտահայտում են հատկանիշի գաղափար, բայց ածականը արտահայտում է առարկայի, իսկ մակբայը՝ գործողության հատկանիշ: Դրանք ձևաբանորեն և ձևականորեն համարյա տարբերակված չեն:

Լ.Խաչատրյանը ածական//մակբայ տարաբժեքությունը սահմանելիս հարկ է համարում հստակ տարբերակել բառույթի բուն իմաստաարժեքային եզրերը նրա գործառական տիրույթից և ավելացնում. «Որպեսզի ածականը մակբայական իմաստով հանդես գա, նա պիտի արտահայտի այնպիսի հատկանիշի ընդհանուր գաղափար, որպիսին հատուկ լինի գործողության (կամ հատկանիշի հատկանիշի) և տարածելի լինի նրա վրա»¹⁶:

Ածականին՝ որպես խոսքի մասի, հարաբերակից են նաև որոշ դերանուններ: Վերջիններս որպես որոշիչ դրվում են դարձյալ առարկաների անվանումների վրա: Այդ դերանուններն են՝ *այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, որոշ, որևէ* և այլն: Ածականների տարբերությունն այս դերանուններից այն է, որ ածականներն արտահայտում են հատկանիշի տարբերակված իմաստ, անվանում այս կամ այն հատկանիշը, մինչդեռ դերանունները այդ հատկանիշը նշում կամ մատնացույց են անում ամենաընդհանուր, չտարբերակված ձևով: Այսպես, երբ ասում ենք *գեղեցիկ աղջիկ*, տալիս ենք աղջկա բնութագրում, տարբերակված հատկանիշը՝ որոշակիորեն անվանելով այն, մինչդեռ, երբ ասում ենք *այսպիսի աղջիկ*, կարող ենք նկատի ունենալ ամեն տեսակի հատկանիշ՝ և՛ գեղեցիկ, և՛ տգեղ, և՛ բարձրահասակ և այլն:

Բացի այդ, եթե այս դերանունները ընդգրկենք ածական խոսքի մասի շարքում, ապա այդպիսի պետք է վարվենք նաև մյուս խոսքիմասային արժեք ունեցող կամ մոտ դերանունների հետ, քանզի անժխտելի են դերանուն խոսքի մասի և տարբեր խոսքի մասերի աղերսները:

Ածական//կապ երկարժեքություն են դրսևորում ավելի քիչ թվով բառեր, ինչպես՝ *համապատասխան* վարկած//վարկածին *համապատասխան, անկախ* մարդ/քեզնից *անկախ, մոտ* բարեկամ/ինձ *մոտ, հակառակ* տեսակետ/Նրան *հակառակ, նման* աղջիկ/աղջկա *նման և այլն*:

Այսպիսով, ածականը, որոշակի աղերսներ ունենալով այլ խոսքի մասերի հետ, միևնույն է, խոսքի մասերի համակարգում պետք է դիտարկվի որպես ինքնուրույն և առանձին միավոր, իսկ այլ խոսքի մասերի հետ ունեցած նմանությունները բնական են, որովհետև լեզուն կենդանի, զարգացող համակարգ է և այն քերականական կադապարներով ու կանոններով սահմանափակելն ուղղակի անհնար է:

Բանալի բառեր՝ ածական, գոյական, խոսքիմասային փոխանցում, քերականական կարգ, թվական, հատկանիշ:

¹⁶ Խաչատրյան Լ., *Խոսքիմասային տարաբժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում*, Եր., 1996, էջ 120:

Амалия Маркрян – Некоторые наблюдения о частеречевых переходах прилагательного. Прилагательное, как часть речи, издавна было удостоено внимания армянского грамматического учения, будучи представленным в старых и новых грамматических работах.

Выделяясь в системе частей речи как порядок выражающих признаков слов, прилагательное имеет тесные связи с другими частями речи, имея возможность выражения смысла двух или трех частей речи. Это явление, которое в армянском языкознании принято под названием “частеречевой переход”, является диахроническим принятым явлением, так как границы частей речи неоднозначны и незакрыты.

Двусмысленные и трехсмысленные слова, насколько принадлежат к прилагательному, как части речи, настолько же являются существительным, наречием, причастием или союзом, следовательно частеречевые смыслы подобных слов должны определяться согласно их синтаксическому применению.

Ключевые слова: *прилагательное, существительное, частеречевой переход, числительное, атрибут.*

Amalya Margaryan - Some observations on the “part of speech” transitions of the adjective

The adjective, as a part of speech, has long been awarded the attention of the Armenian grammar studies, being represented in old and new grammatical works.

Standing out in the system of parts of speech as the order of words that express the attribute, the adjective has close connections with other parts of speech, with the ability to express the meaning of two or three parts of speech. This phenomenon, which in Armenian linguistics is called the “part of speech transition,” is a diachronic accepted phenomenon, since the boundaries of the parts of speech are ambiguous and unclosed.

The two- and three-meaning words, as far as belong to the adjective, as parts of speech, are as much a noun, adverb, participle or conjunction, therefore, the “part of speech” meanings of such words should be determined according to their syntactic application.

Keywords: *adjective, noun, “part of speech” transition, grammatical order, numeral, attribute.*

